



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ԵՎ ՇԻՐՈՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգապ թիվ 5065/06)

ՎՃԻՌ
(ըստ էության)

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

20 հուլիս 2010

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի գործում,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*

Elisabet Fura,

Boštjan M. Zupančič,

Alvina Gyulumyan,

Ineta Ziemele,

Luis López Guerra,

Ann Power, *դատավորներ,*

և Santiago Quesada, *Բաժանմունքի քարտուղար,*

2010թ. հունիսի 29-ին կայացած դռնփակ նիստում,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՅԱԿԱՐԳԸ

1. Գործը սկիզբ է առել 2006թ. հունվարի 17-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ պրն. Հովհաննես Հովհաննիսյանի, տկն. Աստղիկ Հովհաննիսյանի և տկն. Դիանա Շիրոյանի («դիմումատուներ») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 5065/06 գանգառի հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացնում էր փաստաբան պրն. Վ. Գրիգորյանը, գործունեության վայրը՝ քաղաք Երևան: ՀՀ կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. 2007թ. սեպտեմբերի 3-ին Երրորդ Բաժանմունքի նախագահն որոշեց գանգառն ուղարկել Կառավարությանը: Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Դատարանը որոշեց նաև իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1976թ., 1973թ. և 1999թ. և ապրում են Երևան քաղաքում:

5. Ըստ դիմումատուների՝ նրանք Երևան քաղաքի Բյուզանդ 17 հասցեում գտնվող 66.8 քմ. ընդհանուր մակերեսով բնակարանի 33.8 քմ մակերեսի նկատմամբ ունեցել են օգտագործման իրավունք: Բնակարանի սեփականատերը հանդիսանում էր իրենց ընտանիքի անդամ Կ.Հ.-ն: Կառավարությունն առարկեց այդ պնդման դեմ և նշեց, որ միայն դիմումատուներ Հովհաննես Հովհաննիսյանն ու Աստղիկ Հովհաննիսյանն են («առաջին դիմումատու» և «երկրորդ դիմումատու») ունեցել այդ իրավունքը, մինչդեռ դիմումատու Դիանա Շիրոյանը («երրորդ դիմումատու»), որն անչափահաս էր, ուներ այդ բնակարանում միայն բնակվելու իրավունք:

6. 2002թ. օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունեց թիվ 1151-Ն որոշումը, որով, կառուցապատման ծրագրեր իրականացնելու նպատակով, հաստատեց Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի (հողամասեր, շենքեր և շինություններ) օտարման գոտիները՝ 345,000 քմ ընդհանուր մակերեսով: Բյուզանդ փողոցը ներառված էր այդ օտարման գոտիների ցանկում:

7. 2004թ. հունիսի 17-ին Կառավարությունն որոշեց Բյուզանդի փողոցի մի հատվածի (որը հետագայում պետք է վերանվանվեր Գլխավոր Պողոտա) կառուցապատումն իրականացնելու նպատակով պայմանագիր կնքել «Վիզկոն» ՍՊԸ մասնավոր ընկերության հետ:

8. 2004թ. հոկտեմբերի 1-ին «Վիզկոն» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնագիր է կնքում, որով, *մասնավորապես*, վերջինիս իրավունք է վերապահվում ուղղակիորեն բանակցել օտարման ենթակա անշարժ գույքի սեփականատերերի հետ, իսկ բանակցությունների ձախողման

դեպքում պետության անունից հայց ներկայացնել դատարան՝ սեփականության հարկադիր օտարման պահանջով:

9. 2005թ. փետրվարի 25-ին «Վիզկոն» ՍՊԸ-ն նամակով տեղեկացնում է առաջին և երկրորդ դիմումատուներին, որ խնդրո առարկա բնակարանը գտնվում է Գլխավոր Պողոտայի օտարման գոտու սահմաններում և պետք է վերցվի պետության կարիքների համար: Յուրաքանչյուր դիմումատուին առաջարկվում է 3,500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով ֆինանսական խրախուսում՝ Կառավարության 2001թ. հոկտեմբերի 5-ի թիվ 950 որոշմամբ հաստատված փոխհատուցման ընթացակարգի 7(գ) և 8(ե) կետերին համապատասխան (տե՛ս ստորև պարբերություններ 26 և 27, այսուհետ՝ «փոխհատուցման ընթացակարգ»):

10. Առաջին և երկրորդ դիմումատուները չեն ընդունում այդ առաջարկը:

11. «Վիզկոն» ՍՊԸ-ն պետության անունից հայց է ներկայացնում առաջին և երկրորդ դիմումատուների դեմ՝ պահանջելով դադարեցնել նրանց օգտագործման իրավունքը ֆինանսական փոխհատուցում վճարելու միջոցով և վտարել բոլոր դիմումատուներին՝ վկայակոչելով, *մասնավորապես*, Քաղաքացիական օրենսգրքի 218 և 220 հոդվածները: Հայցվորը պնդում է, որ օգտագործման իրավունք ունեցող անձինք՝ համաձայն փոխհատուցման ընթացակարգի 8-րդ պարբերության իրավունք ունեն ստանալ 3,500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով խրախուսում:

12. «Վիզկոն» ՍՊԸ-ն դատաքնությունների ընթացքում առաջարկում է փոխհատուցման նույն գումարը նաև երրորդ դիմումատուին, քանի որ նա նույնպես գրանցված էր բնակարանում: Երրորդ դիմումատուն ներգրավվում է դատաքնություններին՝ որպես նույն գործով համապատասխանող:

13. 2005թ. մարտի 2-ին «Վիզկոն» ՍՊԸ-ի և բնակարանի սեփականատեր Կ.Հ.-ի միջև պայմանագիր է կնքվում, ըստ որի նա համաձայնվում է հանձնել բնակարանը պետությանն այլ բնակարանի դիմաց: Մյուս երկու անձինք, ովքեր նույնպես ունեին այդ բնակարանի նկատմամբ օգտագործման իրավունք, ընդունում են առաջարկված գումարային հատուցումը և հրաժարվում իրենց իրավունքներից:

14. 2005թ. մարտի 16-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարում է «Վիզկոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայցը՝ դադարեցնելով դիմումատուների օգտագործման իրավունքը և նշանակում 10,500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով փոխհատուցում: Դատարանն իր որոշումը հիմնավորել էր Քաղաքացիական օրենսգրքի 218 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 220 հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև փոխհատուցման ընթացակարգի 10-րդ կետով:

15. 2005թ. մարտի 31-ին դիմումատուները վերաքննիչ բողոք են ներկայացնում:

16. 2005թ. հունիսի 3-ին ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը բավարարում է «Վիզկոն» ՍՊԸ-ի հայցը՝ առաջին ատյանի դատարանի կողմից վկայակոչված նույն հիմքերով:

17. 2005թ. հունիսի 16-ին մեկ այլ պայմանագիր է կնքվում «Վիզկոն» ՍՊԸ-ի և բնակարանի սեփականատեր Կ.Հ.-ի միջև, որը նույնաբովանդակ էր 2005թ. մարտի 2-ի պայմանագրի հետ:

18. 2005թ. հունիսի 21-ին դիմումատուները ներկայացնում են վճռաբեկ բողոք, որին ի լրումն բողոք ներկայացվում է 2005թ. հուլիսի 15-ին:

19. 2005թ. հունիսի 24-ին պաշտոնապես գրանցվում է բնակարանի նկատմամբ պետության սեփականության իրավունքը՝ հիմք ընդունելով 2005թ. հունիսի 16-ի պայմանագիրը:

20. 2005թ. հուլիսի 18-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժում է դիմումատուների բողոքը:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Բնակելի տարածության օգտագործման իրավունքին վերաբերող ներպետական դրույթները

21. Ներպետական օրենսդրության համապատասխան դրույթների համառոտ շարադրանքը տե՛ս *Minasyan and Semerjyan v. Armenia* գործով վճռում (գանգատ թիվ 27651/05, պարբ. 23 և 34-43, 2009թ. հունիսի 23):

Բ. Այլ ներպետական դրույթներ

1. Քաղաքացիական օրենսգիրք (խնդրո առարկա ժամանակահատվածում եղած խմբագրությամբ)

22.135-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

23.176-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է դրա գրանցման պահից:

24.218-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում էին, որ հողամասը սեփականատիրոջից կարող է վերցվել պետության կամ համայնքի կարիքների համար՝ դրա գինը հատուցելու միջոցով: Կախված այն բանից, թե ում կարիքների համար է վերցվում հողամասը, դրա գինը հատուցում է պետությունը կամ համայնքը: Պետության կամ համայնքի կարիքների համար հողամաս վերցնելու մասին որոշում ընդունում էր պետական մարմինը:

25.220-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր, որ եթե սեփականատերոջ հետ համաձայնություն ձեռք չի բերվել պետության կարիքների համար հողամասն իրենից վերցնելու վերաբերյալ՝ ելնելով հատուցման գնի կամ հատուցման այլ պայմաններից, ապա համապատասխան պետական մարմինը կարող էր հողամասը վերցնելու մասին հայց հարուցել դատարան:

2. Կառավարության 2001թ. հոկտեմբերի 5-ի թիվ 950 որոշումը Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայի և օտարման այլ գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը վերցնելու, փոխհատուցելու, գնային առաջարկը ձևավորելու և իրացնելու կարգը հաստատելու մասին (խնդրո առարկա ժամանակահատվածում եղած խմբագրությամբ)

26. Փոխհատուցման ընթացակարգի 7(գ) կետի համաձայն՝ այն անձինք (նաև անչափահաս երեխան), որոնք գրանցված էին այդ

թվում ապօրինի շինություններում՝ այն օրվա դրությամբ (2001թ. օգոստոսի 28), երբ իրավասու պետական մարմնի՝ պետության կարիքների համար հողամասը վերցնելու մասին որոշումն ընդունելու հիման վրա կատարվել էր պետական գրանցում՝ յուրաքանչյուրը պետք է ստանար 2,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով խրախուսում՝ հիմք ընդունելով գրանցումը հաստատող փաստաթուղթը (անձնագիր, ծննդյան վկայական կամ վկայական, որը տրամադրել է գրանցման մասով իրավասու մարմինը):

27. Փոխհատուցման ընթացակարգի 8(ե) կետի համաձայն՝ սույն Ընթացակարգի 7(գ) կետում նշված անձինք պետք է ստանային 1.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով խրախուսում:

28. Փոխհատուցման ընթացակարգի 10-րդ կետի համաձայն՝ օտարման գոտում գտնվող հողամասի նկատմամբ օրենքով սահմանված կարգով օգտագործման կամ վարձակալության իրավունք ձեռք բերած անձիք որպես փոխհատուցում պետք է ստանային հանձնած հողամասի օգտագործման կամ վարձակալության իրավունքի գնահատման արժեքը:

ՕՐԵՆՔԸ

1. Թիվ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

29. Դիմումատուները բողոքեցին, որ իրենց գույքից զրկելը տեղի է ունեցել Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված երաշխիքների խախտումով, որի համաձայն՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ

հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ա. Կողմերի դիրքորոշումները

30. Կառավարությունը պնդեց, որ դիմումատուները չեն ունեցել «գույք» Կոնվենցիայի Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Օտարման ժամանակբնակարանի միակ սեփականատերը պետությունն էր, որի մասին են վկայում պետության և բնակարանի նախկին սեփականատիրոջ՝ Կ.Հ.-ի միջև կնքված երկու պայմանագրերը: Մյուս կողմից դիմումատուները բնակարանի նկատմամբ ունեցել են միայն օգտագործման իրավունք, ինչը հավասար էր այնտեղ բնակվելու իրավունքին և չէր կարող «գույք» հասկացությանը համարժեք դիտարկվել: Այդ իրավունքը բացարձակ չէր և կարող էր դադարեցվել Քաղաքացիական օրենսգրքի 225 հոդվածի ներքո սեփականատիրոջ պահանջով, ինչը տեղի է ունեցել սույն գործում:

31. Ավելին, երրորդ դիմումատուն նույնիսկ չի ունեցել օգտագործման ինքնուրույն իրավունք, քանի որ նա անչափահաս էր և համաձայն «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, ուներ իր մոր՝ երկրորդ դիմումատուի հետ այդ տանն ապրելու իրավունք: Ամփոփելով՝ քանի որ դիմումատուները չեն ունեցել գույք, նրանց գանգատը *ratione materiae* անհամատեղելի է Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի դրույթների հետ:

32. Դիմումատուները նշել են, որ իրենք երեքն էլ ունեցել են բնակարանի նկատմամբ օգտագործման իրավունք: Դա հաստատվել էր գործում առկա ապացույցներով, մասնավորապես, ներպետական դատարանների եզրահանգումներով, որոնցով որոշվել էր դադարեցնել երեք դիմումատուների օգտագործման իրավունքը: Այդ իրավունքը հանդիսանում է գույքային իրավունք և Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով ներառվում է «գույք» հասկացության մեջ:

33. Դիմումատուներն այնուհետև նշեցին, որ իրենց գույքից զրկելը չի իրականացվել օրենքով սահմանված պայմաններով և խախտել է, մասնավորապես, Սահմանադրության 28-րդ հոդվածը և Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը: Վերջին դրույթը,

մասնավորապես, սահմանում էր, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքը կարող էր դադարեցվել միայն բնակարանի *սեփականատիրոջ* պահանջով: Սակայն, Վերաքննիչ դատարանի կողմից «Վիզկոն» ՍՊԸ-ի հայցը բավարարելու ժամանակ, մասնավորապես՝ 2005թ. հունիսի 3-ին, բնակարանը դեռ չէր պատկանում պետությանը և սեփականության իրավունքով պատկանում էր բացառապես Կ.Հ.-ին: Բնակարանի նկատմամբ պետության սեփականության իրավունքը գրանցվել է միայն 2005թ. հունիսի 24-ին և այս հարցը երբևէ նույնիսկ չի բարձրացվել Վճռաբեկ դատարանում դատաքննությունների ընթացքում:

34. Այնուհետև դիմումատուները պնդեցին, որ իրենց գույքից զրկելը չի հետապնդել իրավաչափ նպատակ գերակա շահի տեսանկյունից, քանի որ այն իրականացվել է միայն մասնավոր կազմակերպության՝ «Վիզկոն» ՍՊԸ-ի շահի համար: Ավելին, փոխհատուցման գումարը, որը նրանց առաջարկվել էր, եղել է կամայական և չհիմնավորված:

Բ. Դատարանի գնահատականը

1. Ընդունելիությունը

35. Դատարանը գտնում է, որ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի նկատմամբ դիմումատուների գանգատի անհամապատասխանության հարցի վերաբերյալ Կառավարության առարկությունը սերտորեն կապակցված է այդ հոդվածի ներքո ներկայացված դիմումատուների գանգատի էությանը, ուստի այն պետք է միացվի գործի ըստ էության քննությանը:

36. Դատարանը նշում է, որ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ներքո դիմումատուների ներկայացրած գանգատն ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով: Դատարանը նշում է նաև, որ գանգատն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

2. Գործի ըստ էության քննությունը

(ա) Արդյոք տեղի է ունեցել դիմումատուների գույքից օգտվելու իրավունքին միջամտություն

37. Դատարանը նշում է, որ ըստ Կառավարության դիրքորոշման դիմումատուները չեն ունեցել «գույք» Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Դատարանը, այնուհանդերձ, նշում է, որ բնակելի տարածության օգտագործման իրավունքը հանդիսանում է «գույք» այդ հոդվածի իմաստով (տես *Minasyan and Semerjyan v. Armenia*, վկայակոչված վերը, պարբ. 56):

38. Ինչ վերաբերում է մասնավորապես երրորդ դիմումատուին, Դատարանը նշում է, որ Կառավարության դիրքորոշումը չի հիմնավորվում ներպետական դատարանների եզրահանգումներով, որոնք գտել են, որ բոլոր դիմումատուներն ունեցել են բնակելի տարածությունից օգտվելու իրավունք և որոշել են դադարեցնել այդ իրավունքը՝ փոխհատուցում վճարելու միջոցով:

39. Դատարանն եզրահանգում է, որ սույն գործով բոլոր դիմումատուներն ունեցել են խնդրո առարկա բնակարանի նկատմամբ օգտագործման իրավունք և այդ իրավունքի դադարեցումը գույքից զրկելու միջոցով և Երևան քաղաքի կենտրոնում կառուցապատում իրականացնելու նկատառումներով հանդիսանում է միջամտություն դիմումատուների գույքից անարգել օգտագործելու իրավունքին (*նույն տեղում*, պարբ. 59 և 61): Հետևաբար, Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածին դիմումատուների գանգատի անհամապատասխանության վերաբերյալ Կառավարության դիրքորոշումը պետք է մերժվի:

(բ) Արդյոք դիմումատուների գույքից օգտվելու իրավունքին միջամտությունը եղել է հիմնավորված:

40. Դատարանը կրկնում է, որ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջնային և ամենակարևոր պահանջը հանդիսանում է այն, որ պետական մարմինների կողմից գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտությունը պետք է լինի օրինական. առաջին մասի երկրորդ նախադասությունը թույլատրում է գույքից օգտվելու իրավունքի դադարումը միայն «այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով» և երկրորդ մասը սահմանում է,

որ պետությունն իրավունք ունի իրականացնել վերահսկողություն սեփականության օգտագործման նկատմամբ՝ կիրառելով «օրենքները»: Ավելին, օրենքի գերակայությունը, հանդիսանալով ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը, ներհատում է Կոնվենցիայի բոլոր հոդվածներին (տե՛ս *Former King of Greece and Others v. Greece* [GC], թիվ 25701/94, պարբ. 79, ECHR 2000-XII):

41. Դատարանը, այնուհետև, կրկնում է, որ «այն պայմաններով, որոնք սահմանված են օրենքով» արտահայտությունն առաջին հերթին ենթադրում է պատշաճ մակարդակի մատչելի, բավարար հստակ և կանխատեսելի ներպետական իրավական նորմերի առկայություն և համապատասխանություն (տե՛ս *Lithgow and Others v. the United Kingdom*, 8 հուլիս 1986թ., պարբ. 110, Սերիա Ա թիվ 102; *Hentrich v. France*, 22 սեպտեմբեր 1994թ., պարբ. 42, Սերիա Ա թիվ 296-Ա; և *Beyeler v. Italy* [GC], թիվ 33202/96, պարբ. 109, ECHR 2000-I):

41. Դատարանը նշում է, որ այն արդեն ուսումնասիրել է Երևան քաղաքի կենտրոնում կառուցապատման աշխատանքներ իրականացնելու նպատակով իշխանությունների կողմից Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի հիման վրա օգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ գանգատ և գտել է, որ դիմումատուների գույքի նկատմամբ միջամտությունն եղել է կամայական և անօրինական (տե՛ս *Minasyan and Semerjyan*, վկայակոչված վերը, § 75-76): Սույն գործում Կառավարությունը նշել է, որ դիմումատուների օգտագործման իրավունքը նույնպես դադարեցվել է 225-րդ հոդվածի հիման վրա՝ լիովին պահպանելով դրա պահանջները, քանի որ պետությունն է եղել այդ բնակարանի սեփականատերը խնդրո առարկա ժամանահատվածում, իսկ նշված հոդվածը թույլատրում էր դիմումատուների՝ օգտագործման իրավունքի դադարեցում՝ համարժեք փոխհատուցման միջոցով:

42. Դատարանը, սակայն, նշում է, որ պետությունը Քաղաքացիական օրենսգրքի 135-րդ և 176-րդ հոդվածներին համապատասխան այդ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել միայն 2005թ. հունիսի 24-ին, երբ սեփականության իրավունքը պաշտոնապես գրանցվեց (տե՛ս վերը՝ պարբ. 19): Այսպիսով, «Վիզկոն» ՍՊԸ-ի կողմից դիմումատուների՝ օգտագործման իրավունքը դադարեցնելու պահանջով հայց ներկայացնելու և Առաջին ատյանի դատարանի

և Վերաքննիչ դատարանի կողմից այդ հայցի ըստ էության քննության արդյունքում որոշումներ ընդունելու ժամանակ, մասնավորապես, համապատասխանաբար 2005թ. մարտի 16-ին և հունիսի 3-ին, այդ բնակարանի միակ սեփականատերն էր երրորդ անձը՝ Կ.Հ.-ն: Կ.Հ.-ի և «Վիզկոն» ՍՊԸ-ի միջև պայմանագիրն իրոք կնքվել էր մինչև Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից վերոնշյալ հայցի ըստ էության քննությունը (տե՛ս վերը՝ պարբ. 13): Սակայն, ենթադրվում է, որ այդ պայմանագիրը չի իրագործվել, իսկ պետության սեփականության իրավունքը պաշտոնապես գրանցվել է միայն Վերաքննիչ դատարանի կողմից կայացված վճռի արդյունքում նույն կողմերի միջև երկրորդ պայմանագիրը կնքվելուց հետո (տե՛ս վերը՝ պարբ. 16, 17 և 19): Ավելին, Վճռաբեկ դատարանում գործի քննությունը, որը կայացել է պետության կողմից սեփականության իրավունքն արդեն իսկ ձեռք բերելուց հետո, սահմանափակված էր վճռաբեկ բողոքով և նույնիսկ չի անդրադարձել այդ հարցին:

43. Ամեն դեպքում Դատարանը նշում է, որ դիմումատուների՝ օգտագործման իրավունքը դադարեցնելու մասին պահանջ ներկայացնելիս և որոշում ընդունելիս, հայցվորը և դատարանները չեն հիմնվել Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի վրա: Փաստորեն, դա իրականացվել է Քաղաքացիական օրենսգրքի, մասնավորապես, 218-րդ և 220-րդ հոդվածների դրույթների հիման վրա, որոնցով կարգավորվում էր հողամասի հարկադիր օտարման հարցը: Ուստի, Կառավարության պնդումը, որ դիմումատուների՝ օգտագործման իրավունքն օրինական կերպով դադարեցվել է Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի հիման վրա, չի հիմնավորվում գործի հանգամանքներով:

44. Դատարանը, ինչպես արդեն վերը նշվել է, գտնում է, որ դիմումատուների՝ բնակարանի նկատմամբ օգտագործման իրավունքը դատարանների կողմից դադարեցվել է Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ և 220-րդ հոդվածների վկայակոչմամբ: Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ այդ հոդվածները սահմանում են հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման հնարավորությունը և չեն պարունակում որևէ դրույթ բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարեցման վերաբերյալ (տե՛ս վերը՝ պարբ. 24 և 25): Հետևաբար, դիմումատուների՝ օգտագործման

իրավունքը դադարեցվել է այն իրավական դրույթների հիման վրա, որոնք կիրառելի չէին նրանց գործով: Դատարանը գտնում է, որ օգտագործման իրավունքի նման դադարեցումն անխուսափելիորեն կհանգեցնեք անկանխատեսելի կամ կամայական հետևանքների և կզրկեք դիմումատուներին իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանությունից: Հետևաբար, նման իրավական հիմնավորմամբ դիմումատուների սեփականությանը միջամտությունը սխալմամբ, բայց և այնպես, մեկնաբանվում է կամայական և անօրինական (տե՛ս, ի թիվս այլոց, *Minasyan and Semerjyan*, վկայակոչված վերը, պարբ. 75-76):

45. Նման եզրահանգումն ավելորդ է դարձնում պարզելը, թե արդյոք հասարակական գերակա շահի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության համար ներկայացվող պահանջների միջև առկա է արդարացի հավասարակշռության խախտում (տե՛ս *Sporrong and Lönnroth v. Sweden*, 23 սեպտեմբեր 1982թ, պարբ. 69, Սերիա Ա թիվ 52, և *Iatridis v. Greece* [GC], թիվ 31107/96, պարբ. 62, ECHR 1999-II):

46. Հետևաբար, առկա է Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

47. Դիմումատուները, այնուհետև, գանգատվեցին, որ իրենց գույքից զրկելը խախտել է նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, ինչպես նաև ներպետական դատաքննությունների ընթացքում խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

48. Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերը, ինչպես նաև այն, որ նշված գանգատների քննությունն իր իրավասության շրջանակներում է, գտավ, որ դրանցում առկա չեն Կոնվենցիայի և դրան կից Արձանագրություններով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտումներ: Հետևաբար, համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, գանգատի այս մասը պետք է մերժվի որպես ակնհայտորեն անհիմն:

III. ԿՈՆՎԵՆՅԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

49. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Կողմերի պնդումները

1. Դիմումատուները

(ա) Վնաս

50. Դիմումատուները պնդեցին, որ իրենց պահանջներն արդյունավետ ներկայացնելու համար իրենք հնարավորություն չեն ունեցել նյութական վնասի վերաբերյալ ստանալ որևէ տեղեկատվություն պետական մարմիններից, քանի որ պետական պաշտոնյաներն ունեին տնտեսական շահ կառուցապատման ծրագրերում և, հետևաբար, արգելափակում էին ցանկացած հնարավորություն ստանալու համապատասխան պաշտոնական տեղեկատվություն, մասնավորապես, Երևան քաղաքի կենտրոնում անշարժ գույքի գների վերաբերյալ:

51. Վերոշարադրյալի հիման վրա՝ դիմումատուները պնդեցին, որ իրենց օգտագործման իրավունքի արժեքը պետք է հաշվարկվեր եկամտի կապիտալիզացիայի մեթոդի և Քաղաքացիական օրենսգրքի փոփոխված 225-րդ հոդվածով նախատեսված բանաձևի կիրառմամբ: Հիմնվելով նման հաշվարկի վրա՝ որպես նյութական վնասի հատուցում՝ յուրաքանչյուր դիմումատուի համար ներկայացվեց 7,560,000 ՀՀ դրամի պահանջ, որը համարժեք էր 16,666.30 եվրոյին:

52. Դիմումատուները նաև պահանջեցին յուրաքանչյուրի համար 10,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ պնդելով, որ ապօրինի օտարման և անօթևան դառնալու արդյունքում իրենք ունեցել են անօգնականության և հիասթափության զգացում:

(բ) Ծախսեր և ծախքեր

53. Առաջին դիմումատուն նաև պահանջել է 100 եվրո՝ փոստային ծախսերի համար:

2. Կառավարությունը

54. Կառավարությունը պնդեց, որ նյութական վնասի հաշվարկման համար դիմումատուների կողմից առաջարկված բանաձևը կիրառելի չէր նրանց գործի նկատմամբ, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի փոփոխությունները, որոնցով առաջարկվել էր խնդրո առարկա բանաձևը, ուժի մեջ են մտել միայն 2005թ. նոյեմբերի 26-ին, այսինքն՝ սույն գործի հանգամանքներից հետո:

55. Կառավարությունը խնդրեց Դատարանին մերժել դիմումատուների նյութական և ոչ նյութական վնասի, ծախսերի և ծախքերի հատուցման պահանջները, քանի որ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված նրանց իրավունքները չէին խախտվել:

2. Դատարանի գնահատականը

56. Դատարանը գտնում է, որ 41-րդ հոդվածի կիրառելիության հարցը առայժմ պատրաստ չէ որոշման համար: Այդ հարցը, հետևաբար, պետք է հետաձգվի և սահմանվի հետագա ընթացակարգ՝ հաշվի առնելով Կառավարության և դիմումատուների միջև հաշտության համաձայնության հնարավորությունը:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ.

1. Որոշում է միացնել Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ներքո դիմումատուների ներկայացրած գանգատն այդ հոդվածի դրույթներին չհամապատասխանելու վերաբերյալ Կառավարության առարկությունը գանգատի ըստ էության քննությանը և մերժել այն.

2. Հայտարարում է ընդունելի դիմումատուներին գույքից զրկելու վերաբերյալ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի կապակցությամբ ներկայացված գանգատը, իսկ գանգատի մնացյալ մասն՝ անընդունելի.
3. Վճռում է, որ տեղի է ունեցել Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում.
4. Վճռում է, որ 41-րդ հոդվածի կիրառելիության հարցն առայժմ պատրաստ չէ որոշում կայացնելու համար.
հետևաբար՝
 - (ա) հետաձգում է նշված հարցը.
 - (բ) հրավիրում է Կառավարությանը և դիմումատուներին ներկայացնել իրենց գրավոր առարկությունները և, մասնավորապես, ծանուցել Դատարանին ցանկացած համաձայնության մասին՝ Կոնվենցիայի 44 հոդվածի 2-րդ մասի համաձայն վճռի վերջնական դառնալու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում.
 - (գ) Հետաձգում է հետագա ընթացակարգը և փոխանցում է Պալատի Նախագահին անհրաժեշտության դեպքում նույնը սահմանելու իրավասությունը:

Կատարված է անգլերեն, գրավոր ծանուցվել է 2010թ. հուլիսի 20-ին համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերի:

Santiago Quesada
Քարտուղար

Josep Casadevall
Նախագահ